ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԿԱՐՄԻՐ ԱՂԵԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Կարմիր Աղեկ համայնք
գ. Կարմիր Աղեկ, փողոց 2, տուն 19, հեռ. 091929305
էլ.փոստ karmiraghegi.lori@mta.gov.am
,, 08,, սեպտեմբերի 2017թ. թիվ 08/09-1

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

ՊԱՐՈՆ Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Ձեզ եմ ուղարկում Կարմիր Աղեկ համայնքի ավագանու 2017թ. սեպտեմբերի 6-ի թիվ 15-Ն և 16 որոշումներն առդիր երեք էջով:

ՀԱՄԱՅՆՔԻ ԳԼԽԱՎՈՐ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԿԱՐՄԻՐ ԱՂԵԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Կարմիր Աղեկ համայնք, գ. Կարմիր Աղեկ Փ2, Շ19
հեռ. 091 929305, էլ.փոստ karmiraghegi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«06» սեպտեմբերի 2017 թվականի N 15-Ն

ԿԱՐՄԻՐ ԱՂԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 30 -Ի <<ԿԱՐՄԻՐ ԱՂԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԹԻՎ 18-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, << Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասով և 70-րդ հոդվածի 6-րդ մասով

Կարմիր Աղեկ համայնքի ավագանին որոշում է.

1. Կարմիր Աղեկ համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 30-ի <<Կարմիր Աղեկ համայնքի 2017 թվականի բյուջեն հաստատելու մասին>> թիվ 18-Ն որոշման մեջ կատարել փոփոխություն և շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն թիվ 1-ից թիվ 6 հատվածների:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող տասներորդ օրը:

Նիստին ներկա էին և քվեարկեցին ավագանու հետևյալ անդամները

NN	Ազգանուն անուն հայրանուն	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
1	Աբրահամյան Մնակ Արտավազդի			
2	Ալեքսանյան Արարատ Վանիչկայի			
3	Երեմյան Վրեժ Ռուբենի			
4	Հովասափյան Արմինե Ժորայի			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

06 սեպտեմբերի 2017թ.
գ. Կարմիր Աղեկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԿԱՐՄԻՐ ԱՂԵԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Կարմիր Աղեկ համայնք, գ. Կարմիր Աղեկ Փ2, Շ19
հեռ. 091 929305, էլ.փոստ karmiraghegi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«06» սեպտեմբերի 2017 թվականի N 16-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ, 35-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի, ինչպես նաև 77-րդ և 80-րդ հոդվածների՝

Կարմիր Աղեկ համայնքի ավագանին որոշում է.

1. Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Կարմիր Աղեկ համայնքի ղեկավարի առաջարկությունը և տեխնիկայի գնահատման մասին <<Մար-Մոս>> ՍՊԸ հաշվետվությունը, վերանորոգման և պահպանման հետագա աննպատակահար ծախսերից խուսափելու նպատակով դուրս գրման միջոցով օտարել Կարմիր Աղեկ համայնքին պատկանող համայնքապետարանի հիմնական միջոց հանդիսացող և օգտագործման համար ոչ պիտանի ՍԿ-5 ՆԻՎԱ մակնիշի հացահատիկի կոմբայնը;
2. Գույքն օտարելու համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված սահմանափակումներ չկան:
3. Գույքի օտարումից ստացվող ֆինանսական միջոցներն օգտագործվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ուղղվում են համայնքային բյուջեի ֆոնդային մաս:
4. Հանձնարարել համայնքի ղեկավարին՝

   1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում կազմակերպել և իրականացնել գործընթաց սույն որոշման 1-ին և 2-րդ կետերի կատարումն ապահովելու համար:

2) Գույքն օտարելուց հետո մեկշաբաթյա ժամկետում գույքագրման փաստաթղթերում կատարել համապատասխան փոփոխություն և ներկայացնել համայնքի ավագանուն առաջիկա նիստում հաստատելու համար:

Նիստին ներկա էին և քվեարկեցին ավագանու հետևյալ անդամները

NN	Ազգանուն անուն հայրանուն	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
1	Աբրահամյան Սևակ Արտավազդի			
2	Ալեքսանյան Արարատ Վանիչկայի			
3	Երեմյան Վրեժ Ռուբենի			
4	Հովասափյան Արմինե Ժորայի			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

(ստորագրություն)

Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

(անուն, ազգանուն)

2017թ. սեպտեմբերի 6

գյուղ Կարմիր Վեղի